«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

«ՄԱՐԳԻՆԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռոզալյա Հարությունյան
ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ
avrozali@mail.ru
Գիտ. ղեկ.՝ հ.գ.դ., պրոֆ. Ն.Հակոբյան

Ի սկզբանե մարգինալության խնդիրը մշակույթային կոնֆլիկտն էր, որն ազդում է անձի հոգեկան վիճակի վրա: Այնուհետև մարգինալությունը սկսեց դիտարկվել որպես սոցիալական շարժունակության արդյունք և իբրև հատուկ կարգավիճակ:

Ուշադրություն է պահանջում նաև այն հանգամանքը, որ հասարակության մեջ հատուկ տեղ գրավող տարբեր խմբերի ուսումնասիրումը մեթոդոլոգիապես դեռ ամրացած չէ պատմական գիտության մեջ: Եթե սոցիոլոգները ուսումնասիրել ու ներկայացրել են բազում աշխատություններ սուբկուլտուր մասսաների, բողոքական շարժումների, ընդդիմությունների, միջանկյալ խավերի մասին, ապա պատմական գիտության մեջ նշվում են միայն լյումպերները, «միջխավային շերտերը», աղանդավորները, ըմբոստ գյուղացիները և այլն:[1]

Տ.Շիբուտանին այսպես է խոսում մարգինալ կարգավիճակի մասին. «Անհատի մարգինալ կարգավիճակի դրական կողմը՝ բարձր ստեղծագործական գործունեությունն է»:[2] Իրոք, որ մարգինալը՝ իր ոչ սովորական, տարբերվող, կրեատիվ էությամբ հանդերձ, ավելի պտղատու ստեղծագործական վերելքներ է ունենում, ինչն էլ հետագայում անդրադառնում է նրա կամային գործունեության վրա:

Ա.Մուլդաշևան ուսումնասիրելով մարգինալությունը միջազգային հաղորդակցման համատեքստում, որպես սահմանային անձնավորության առանձին տեսակ կարևորում է ստեղծագործելու տիպը, որն, իր կարծիքով, ունի անձնական պատասխանատվության բարձր մակարդակ, ազգամիջյան համագործակցության պրակտիկայում ծագող փաստացի հակասություններն ու բարդությունները լուծելու ակտիվ և ստեղծագործական մոտեցում: Ներքին հակամարտության ինքնորոշումը այս տիպի մարգինալի համար ստեղծագործական գործունեությունն է, որն ուղղված է աշխարհին կամ խաղաղությանը:[3] Այս անհատները փորձում են նոր, ինքնաբուխ ու ոչ տիպիկ իրենց խոսքն ասել աշխարհին, սակայն միշտ չէ, որ նոր գաղափարներն ու մտքերը հեշտ ու անխոչընդոտ են ընդունվում: Հիմնականում դրանք դրսևորվում են ըմբոստությունների, ցույցերի, հակաքաղաքական տրամադրությունների ձևով, այդ իսկ պատճառով այդ անհատներին մարգինալ են անվանում: Մարգինալներն էլ իրենց հերթին չընդունվելով կամ չհասկացվելով հասարակության մեծ մասսայի կողմից՝ մեկուսացվում են: Լինում է նաև այլ տարբերակ, երբ մարգինալը չընդունվելով հասարակության կողմից, ստեղծում է սեփական կոալիցիան՝ առաջնորդելով իր հետևորդներով ու գաղափարակիցներով:

---

[1] Н.А. Сайнаков «Маргинальность как понятие. Методологические перспективыв историческом исследовании», Вестник Томского государственного университета. 2013. № 375. С. 97–101
[2] Шибутани Т., Социальная психология. – М., 1969.*С.* 473-479
[3] Мулдашева А.Б. Психологические особенности этнокультурной маргинальности // Социально-психологические исследования межнациональных отношений. – М., 1993 *С.* 219-231

Անհատի մարգինալ կարգավիճակը, Օ.Մակարենկոյի կարծիքով նևրոտիկախտանիշերի և ծանր դեպրեսիայի ծագման պոտենցիալ աղբյուր է: Եթե ծանր դեպք է, ապա դա կարող է ավարտվել ինքնաոչնչացմամբ:[1] Մարգինալ անձի հոգեբանական անհատական գծերը ներառում են հետևյալ հատկանիշները՝ լուրջ կասկածներ սեփական արժանիքների մեջ, անորոշություն ընկերների հետ հարաբերություններում և մերժված լինելու մշտական վախ, անորոշ իրավիճակներից խուսափում, ամաչկոտություն, միայնակություն ու չափազանց երազկոտություն, չափից ավելի անհանգստություն ապագայի նկատմամբ,վախ ցանկացած ռիսկային նախաձեռնության առջև, հաճույք ստանալու, վայելելու, հանգստանալու անկարողություն և ուրիշների կողմից անարդար վերաբերմունքի արժանանալու վախ: Այս ամենը լուրջ սպառնալիքներ են հանդիսանումանձի հոգեբանական անվտանգությանը:

Նվազագույն անհարմարվածության պայմաններում՝ մարգինալ սուբյեկտը ապրում է ներքին լարվածության, մեկուսացման կամ առաջնային խմբին թերի պատկանելիության զգացում: Իսկ առավելագույն անհարմարվածության պայմաններում հնարավոր է անձի կառուցվածքի անկազմակերպվածություն և օտարացում: Օտարումը, իր հերթին, կապված է որոշակի հոգեկան վիճակիհետ, որն արտահայտվում է մի շարք սուբյեկտիվ զգացողությունների մեջ, ինչպիսիք են անտարբերություն, մենակություն, հպարտություն, մեղք, իշխանություն և անզորություն, անտարբերություն և կասկած, շփոթություն և հուսահատություն, հայրենաբաղձություն: Միմյանց հակասող, բայց իրար հետ փոխկապված այս զգացմունքների ապրումը լուրջ մարտահրավեր է անձի հոգեբանական անվտանգությանը, քանի որ դրանց ապրման ընթացքում կարող են փոփոխության ենթարկվել և՛ անձի համոզմունքներն ու նորմերը, և՛ հատկապես, արժեքային համակարգն ու հավակնությունների մակարդակը:

Մարգինալության չափանիշը ի սկզբանե օգտագործվում էր՝ ցույց տալու միգրանտների դեզադապտացվածության հետևանքները, որպես ուրբանիզմի պահանջներին ցուցաբերած կենսակերպ: Միգրացիոն հոսքերի առատության հետևանքով այդ չափանիշները մնում են արդիական մինչ այսօր: Մարգինալությունը վերագրվում է ոչ միայն միգրանտներին, կան նաև դիսկարգայնացված տարրեր, որոնք կարող են մտնել մարգինալ խավի մեջ, օրինակ՝աղքատությունն ու գործազրկությունը պարարտ միջավայր են: Մարգինալ խավի ծագումն ու գործունեությունը անմիջապես կապված է մարգինալ անհատի հետ: Նա մի անհատ է, որը գտնվում է սահմանային իրավիճակում, տարբեր մշակույթների խաչմերուկում՝ նետված լինելով տվյալ հասարակության կյանքի եզրը: Մարգինալ խմբերն ու անհատները հանդիսանում են որոշակի հակահասարակական պահեստներ, գոյություն ունեցող հասարակության առճակատում: Հենց այդ շերտերում ենք մենք տեսնում սոցիալական բողոքի մեծ էներգիա, որը պետքական ժամին և պահին օգտագործվում է պետության կողմից:

Մարգինալության վերաբերվող բոլոր աշխատությունների խնդիրն է՝ գտնել մարգինալությունը հաղթահարելու ուղիներ ու մեթոդներ, նպաստել անհատների սոցիալիզացիային՝ տրանսֆորմացվող հասարակության պայման-ներում: Հիմնականում, մարգինալությունը բաժանում են 3 հիմնական ենթախմբերի, դրանք են՝ մշակույթային, սոցալական և կառուցվածքային: [2]

---

[1] Макаренко О.Н., «К вопросу о психологии маргинальной личности»ISSN 1998-9946. Вестн. Волгогр. гос. ун-та. Сер. 7, Филос. 2009. № 1 (9) 173

[2] Зайцев И.В., «Маргинальность как предметсоциально-философского анализа» Вестник Омского университета, 2002. №2. С. 53–69.

Կարող ենք ասել, որ մարգինալը այն անհատն է, որին չի բավարարում կյանքի ընթացքը կամ ստեղծված պայմաններն ու ինքը այդ իրավիճակից ելքեր է որոնում: Ցանկացած ճգնաժամ շատ լավ նպաստավոր պայմաններ է ստեղծում մարգինալության երևույթի ձևավորման ու զարգացման համար և ըստ այդմ էլ բնութագրում այդ երևույթը: Եթե փորձենք այս հասկացությունը դիտարկել Արցախի օրինակով, ապա տեղին կլինի նշել, որ այստեղ բնակչությունը ինքնին մարգիմալության վառ օրինակ է: Մինչև 1988 թվականները լինելով «եղբայրական» հարաբերություններում ադրբեջանցիների հետ ժամանակի ընթացքում կորցրել են ինքնության որոշ տարրեր (օր.՝ հայոց գրական լեզուն, գիրն ու գրականությունը՝ խոսելով ու սովորելով հիմնականում ռուսերեն լեզվով, դպրոցում հայոց պատմության փոխարեն՝ադրբեջանի կամ ԽՍՀՄ պատմություն ուսուցանելով, յուրացվել են թուրքական մշակույթի որոշ տարրեր և աղճատվել է ազգային նկարագիրն ու ամենակարևորը՝ եկեղեցին: 1988-ի շարժումը հայ ոգու արթնության ու ազատության ճիչն էր, որը նույնպես ճգնաժամային փուլ կարելի է համարել, ինչպես նաև մարգինալության դրսևորման նպաստավոր պայման: Հետպատերազմյան փուլը, որը շատ տիպական էր մարգինալության համար, դժվարին ու տարտամ էր: Ավելացավ թերի և անապահով ընտանիքների թիվը, նկատվեց միգրանտների արտահոսք և ներհոսք, «զարգացավ» արտագնա աշխատանքը, ավելացավ անօթևանների, միայնակ մայրերի և որբերի թիվը: Այդ մարդիկ ճակատագրապես դատապարտված են գոյություն ունենալ երկու աշխարհում՝ միաժամանակ ստիպելով նրանց երկուսի համար էլ լինել կոսմոպոլիտ ու օտար:Սակայն հոգեբանական փոփոխություններ ապրած ու դեռ լրիվ ադապտացիա չանցած անհատը չի կարող մարգինալ համարվել:

Ռոզալյա Հարությունյան

«ՄԱՐԳԻՆԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանալի բառեր՝ *մարգինալ կարգավիճակ, ադապտացիա, սոցիալական նորմեր, արժեքներ, միգրացիա*

Հասարակության մեջ ձևավորված սոցիալական նորմերի, արժեքների և օրենքների բացասումը կամ շրջանցումը բերում է մարգինալ խավերի առաջացման, որոնք մեկուսացվում են հասարակության մյուս անդամներից:Մարգինալությունը առաջին հերթին, մեկ անձի հակամարտող դիրքորոշում է, իսկ առանձնահատկությունն այն է, որ այդ հակամարտությունը լայն է ու բազմակողմանի, որի ներքին՝ կողմը մշակութային-արժեքային, իսկ արտաքինը՝ սոցիալ-մշակույթային նկարագիր ունի: Նման պայմանները վտանգավոր են թե՛ այդ իրավիճակում հայտնված անհատի, թե՛ հասարակության համար, այն դեպքում, երբ մարգինալ տարրերը գերազանցում են հնարավոր մինիմումը:

Розалия Арутюнян

СУЩНОСТЬ И ОСОБЕННОСТИ ПОНЯТИЯ «УСЛОВИЯ МАРГИНАЛЬНОСТИ»

Ключевые слова: *маргинальный статус, адаптация, социальные нормы, ценности, миграция*

Отрицание социальных норм, законов и ценностей, ведет к появлению маргинальных групп и личностей, которые изалируются от других членов общества.Маргинальность в первую очередь, противоположная позиция одного человека, а особенность в том, что этот конфликт является широким, всеобъемлющим, культурно–ценностным и социокультурным одновременно. Такие условия являются опасными для ситуации индивида и общества, если маргинальные элементы превышают возможного минимума.

Rozaly Harutyunyan

THE ESSENCE AND FEATURES OF THE CONCEPRT "CONDITIONS OF MARGINALITY"

Keywords: *marginal status, adaptation, social norms, values, migration*

Marginalization is first of all an opposing position of one person, and the peculiarity is that the conflict is broad, versatile, internal, cultural, and it is the result of the social norms, the errors and the laws of the society that are eroded or overlooked by marginalized groups. - cost, external, socio-cultural at the same time. Such conditions are dangerous both for the individual and the society in the situation, where marginal elements exceed the minimum.